ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2024Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահության ոլորտ

Մարզում 2024թ.առաջին եռամսյակում գործում էր 9 բժշկական հաստատություն, որոնցից 2-ը մատուցում են ամբուլատոր և հիվանդանոցային ծառայություններ, իսկ մնացած 7-ը՝ առողջության առաջնային պահպանման կենտրոններ էին և մատուցում էին միայն ամբուլատոր և պոլիկլինիկական ծառայություններ:

Համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման՝ մարզում իրականացվված առողջապահական բարեփոխումների արդյունքում, «Եղեգնաձորի ԲԿ»-ն և «Վայքի ԲՄ»-ն այսուհետ իրականացնում են միայն ամբուլատոր ծառայություններ և անվանափոխվել են համապատասխանաբար «Եղեգնաձորի պոլիկլինիկա» և «Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների:

Նույն որոշման համաձայն մարզի գյուղական ամբուլատորիաները վերակազմակերպվել և միացվել են Եղեգնաձորի և Վայքի պոլիկլինիկա փակ բաժնետիրական ընկերություններին :

ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման համաձայն 2024 թվականի մարտ ամսից գործում է «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը:
Բժշկական կենտրոնի շինարարության համար ներդրվել է 2,67 մլրդ. դրամ.
- ՀՀ Կառավարության կողմից ներդրվել է 1,17 մլրդ. դրամ, որից 447 մլն. դրամը օգտագործվել է բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար:
- Համաշխարհային բանկի կողմից ներդրվել է 1,5 մլրդ. դրամ:
- Մատուցվելիք բժշկական ծառայություններ՝ վիրաբուժական, թերապևտիկ, մանկաբուժական, ինֆեկցիոն, մանկաբարձ-գինեկոլոգիական, վերակենդանացման, հեմոդիալիզ, ընդունարանին կից անհետաձգելի օգնության կայան, արտահիվանդանոցային ծառայություն, լաբորատոր ախտորոշիչ ծառայություններ, ճառագայթային ախտորոշիչ ծառայություններ:
- Մահճակալների թիվը կազմում է 36 և 5 մահճակալ վերակենդանացման բաժանմունքում:
- «Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ-ն ունի 148 աշխատակից, որից 58-ը բժիշկ, 29 բժիշկներ աշխատում են քաղ.իրավական հիմունքներով:

2024թ տարեվերջին մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների թիվը դարձել է 4-ը:

Բուժհաստատություններում աշխատում են 411 մարդ, որից 156 բժիշկ, 230 բուժքույր:

2024 թվականի ընթացքում իրականացվել է 185839,4 հազ.դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եղել է 129918,5 հազ.դրամ՝ ավելացել է 55920,9 հազ. դրամով:

2024 թ.ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 165 ծնունդ:
Պետական պատվերով բուժման և հետազոտման համար ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 45 քաղաքացի: Առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 21 երեխա իրենց խնամակալների հետ : Եղեգնաձորի ԲԿ-ում գործող "Հայկական ակնաբուժության նախագիծ" բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ագլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2024 թվականին իրականացվել է 163 վիրահատություն:

2024թ.-ին Առողջապահության Ազգային Ինստիտուտի, Ազգային բժշկական պալատի, ՀՕՖ-ի, Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ, գիտաժողովներ, սեմինարներ, դասընթացներ ավագ և միջին բուժաշխատողների, նեղ մասնագետների համար (միջոցառումները կրում են շարունակական բնույթ և տրվել են ՇՄՋ կրեդիտներ):

Մարզի 4 բժշկական կազմակերպություններին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է համակարգիչներ՝ Եղեգնաձորի պոլիկլինիկա, Վայքի պոլիկլինիկա, Մալիշկայի ԱԱՊԿ, Զառիթափի ԱԱՊԿ:

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից բժշկական կազմակերպություններում տեղադրվել են արևային կայաններ.

- Խաչիկի ԲՄԿ-ում ՝ 7 կվտ հզորությամբ,
- Զառիթափի ԱԱՊԿ-ում՝ 7 կվտ հզորությամբ,
- Ջերմուկի ԱԿ-ում՝ 30 կվտ հզորությամբ:

2024թվականի մայիս ամսին ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ Վայքում իրականացվել է <<Առողջ ապրելակերպի>> իրազեկման հանրապետական արշավ վայոցձորյան միջոցառում, որին մասնակցել են մարզի շուրջ 500 դպրոցականներ: Միջոցառման ընթացքում քաղաքացիների մոտ իրականացվել են սկրինինգային բժշկական հետազոտություններ՝ շաքարային դիաբետ, արյան գերճնշման, քաշի սկրինինգ,բերանի խոռոչի հիգիենայի և այլն:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Իմունականխարգելման եվրոպական շաբաթ» նախաձեռնության համատեքստում բնակչության շրջանում իմունականխարգելման, պատվաստումների միջոցով վարակիչ հիվանդությունների կանխարգելման մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կատարվել են հանդիպում- քննարկումներ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի Մալիշկայի N2 միջնակարգ դպրոցում, Արենի համայնքի միջնակարգ դպրոցում և Ջերմուկի կրթահամալիրում:

Նպատակային ուսուցման համար կատարվել են 3 ուղեգրում ՀՀ ԵՊԲՀ:

Պարբերաբար կատարվել է այցելություններ բժշկական կազմակերպություններ, նպատակը՝ մշտադիտարկում, ուսումնասիրություն և խնդիրների վերհանում:

Իրականացվում են գրիպի դեմ, ԿԿԽ, ԱԿԴՓ-Մ, ՄՊՊ և այլ պատվաստումներ՝ համաձայն պատվաստումային օրացույցի: 2024 թվականին Վայոց ձորի մարզում պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշը կազմում է 97%-99%: Ցածր է գրիպի և Պապիլոմավիրուսի պատվաստումների ցուցանիշները:

«Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ-ում մայիսի 25, 26-ին VIVA բարեգործական հիմնադրամի կողմից գործուղված տարբեր մասնագիտությունների բժիշկների կողմից իրականացվել է բաց դռների օր:

«Արենիի» ԱԱՊԿ-ում իրականացվել է բաց դռների օր՝ համայնքի բնակչությանը էնդոկրինոլոգիական և գինեկոլոգիական ծառայություն են մատուցել Նաիրի բժշկական կենտրոնի բժիշկները:

Զառիթափի ԱԱՊԿ և Հռիփսիմե ԳԲԱ –ի սպասարկման տարածաշրջաններում իրականացվել է բաց դռների օր՝ Արաբկիր ԲՀ- ԵԴԱԻ-ի կողմից «Հայաստանում երեխաների շրջանում Պարբերական հիվանդության (Ընտանեկան Միջերկածովյան տենդ) վաղ ախտորոշման և բուժման շարունակական բարելավում» գործող ծրագրի շրջանակներում՝ Պարբերական հիվանդության հանրապետական մանկական կենտրոնի բժիշկ- փորձագետների կողմից տուբերկուլոզի վաղ հայտնաբերման նպատակով իրականացվող սքրինինգային միջոցառումների շրջանակներում «Բժիշկներ առանց սահմանների - Ֆրանսիա» կազմակերպության ֆինանսավորմամբ և Թոքաբանության ազգային կենտրոնի կողմից տրամադրված թվային CAD արհեստական բանականությամբ շարժական ռենտգեն սարքի միջոցով «Սպիտակ երիցուկ» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվեց ԼՂ-ից տեղահանված բնակչության շրջանում տուբերկուլոզի հայտնաբերման սքրինինգ :

ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվում է Ջերմուկում կառուցել նոր հիվանդանոց:

2025 թվականին նախատեսվում է.

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության հովանավորությամբ բժշկական կազմակերպություններում տեղադրել արևային նոր կայաններ, մասնավորապես՝

- «Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ-ում՝ 150 կվտ հզորությամբ,
- «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ում՝ 40 կվտ հզորությամբ,
- արդիականացնել Եղեգնաձորի պոլիկլինիկայում արդեն տեղադրված արևային կայանները,
- լրացնել բժշկական կազմակերպություններում առկա թափուր հաստիքները,
- նախատեսվում է վերակառուցել Զառիթափի և Աղավնաձորի ԱԱՊԿ-ների շենքերը,
- Կարմիր խաչի կողմից նախատեսվում է նաև իրականացնել Մարտիրոսի և Սարավանի ԲՄԿ-ների շինարարական աշխատանքները:

Սոցիալական ոլորտի հարցերի բնագավառ

Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների սոցիալական ապահովություն-2024 թվականին սոցիալական հարցերի ոլորտի հրատապ խնդիրը 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի պատճառով Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանված բնակչությանը ընդունելու և կացության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն էր: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզում բնակվում է 332ընտանիք և 1243 անձ/թվերը փոփոխական են/: Տեղահանված ընտանիքներին ՀՀ Կառավարության և բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրվել է անհրաժեշտ օգնություն:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի նախաձեռնությամբ ձևավորվել են աշխատանքային խմբեր և մարզի բնակավայրերում հանդիպումներ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության հետ: Ներկայացրվել են պետական աջակցության առողջապահական, կրթական, ֆինանսական, աշխատանքի տեղավորման ծրագրերը: Արձանագրվել են ԼՂ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը և աշխատանքներ են տարվել դրանց լուծման ուղղությամբ :

Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օր լուսաբանման աշխատանքներ են իրականացվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի վերաբերյալ: Շահառուները տեղեկացվել են ծրագրի նկարագրի, փուլային առանձնահատկությունների, ըստ բնակավայրերի աջակցության չափի մասին: Տեղեկատվությունը տեղադրվել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների համացանցի պաշտոնական էջերում, բաժանվել են տեղեկատվական թերթիկներ: Անձնագրերի հետ կապված խնդիրների լուծման համար ՀՀ Վայոց ձորի մարզում դեկտեմբերի 6-ին աշխատել է ՆԳՆ շրջիկ ծառայությունը , որը ընդունել է 78 դիմում և խորհրդատվություն է տրամադրել 30-ավելի Լեռնային Ղարաբաղից տեղահանված քաղաքացիների:

Լեռնային Ղարաբաղից տեղահանված 100 երեխաների համար հոկտեմբերի 29-ին Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ տոնական միջոցառում է կազմակերպվել, երեխաներին նվերներ են տրամադրվել: Եղեգնաձորի մշակույթի տանը կազմակերպվել է հանդիպում «Ամարաս» համահայկական ԲՀԿ-ի և Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների հետ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովություն. 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի, մարտական հերթապահության ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ամենօրյա աշխատանք է տարվել: Օրենքով սահմանված հատուցումները ընտանիքները ստանում են: Կատարվել են

10 տնային այցելություններ, 65 ընտանիքների տրամադրվել է խորհրդատվություն, 20 ընտանիքների ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է ֆինանսական աջակցություն: Եղեգիս համայնքում հրավիրվել է Արցախյան պատերազմներում, մարտական հերթապահության ժամանակ զոհված զինծառայողների ծնողների հետ հանդիպում: Խնդիրները արձանագրվել են և անհրաժեշտ լուծումներ են տրվել: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Հայաստանյան պատվիրակության հետ աշխատանքներ ենք տարել անհայտ կորած զինծառայողների ընտանիքների խնդիրները լուծելու համար:

ՀՀ Վարչապետի տիկնոջ գրասենյակի կողմից հրատարակված տեղեկատվական թերթիկները տրամադրվել է զոհված զինծառայողների ընտանիքներին: ՀՀ պաշտպանություն նախարարություն է ներկայացվել միանվագ դրամական օգնության համար 9 դիմումներ: Հատուցումը ընտանիքները ստացել են: ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու համար տեղեկանքները բերվել և տրամադրվել է զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է 43 ընտանիք, ընդ որում 2024 թվականին հաշվառվել է 2 զոհված զինծառայողների ընտանիքներ :

2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող 1 նախկին զինծառայողի տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, որով բնակարան է գնել: 2006թվականին հաշվառված 3 հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային բարելավման գործերը ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարություն:

44 օրյա պատերազմի ժամանակ վիրավորված և հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների առողջական խնդիրների լուծման համար աշխատել ենք բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ: 44 օրյա պատերազմի հաշմանդամություն ունեցող, կարիքավոր նախկին զինծառայողներին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է դրամական օգնություն:

Հաշամանդամություն ունեցող անձինք և տարեցներ.

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը պետական դրամաշնորհով ՀՀ Վայոց ձորի մարզում տնային պայմաններում խնամքի ծառայություններ է մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցներին և հաշմանդամություն

ունեցող անձանց՝ անհատական սոցիալական կարիքներին համապատասխան: Շահառուներին տրամադրվել է սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության, կենցաղային սպասարկման կազմակերպման և խնամքի իրականացման, իրավունքերի պաշտպանությանն ուղղված ծառայություններ:

Տարեցների մրջազգային օրվա կապակցությամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի գլխավորությամբ այցելել ենք 3 հարյուրամյա տարեցների, նրանց տրամադրվել է ֆինանսական աջակցություն: Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման աշխատանքները համակարգում է <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց ձորի մարզային հանձնաժողովը>>: Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական, մարզային, համայնքային կառույցների, սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ: Իրազեկման աշխատանքներ է տարվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»,«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքների և Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների ***համալիր*** ծրագրի վերաբերյալ:

226 հաշմանդամություն անձի ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է դրամական օգնություն:

Պետական զբաղվածության ծրագրերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են տարվել: Համայնքներից հավաքագրվել է շահառուների ցուցակները և ներկայացրել ենք ՀՀ ԱՍՀՆ:Վերջնական արդյունքում 2024 թվականի իրականացվել է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» 56 ծրագիր:

Մարզի բնակչության սոցիալական վիճակը պարբերաբար ուսումնասիրվում է, կատարվում են տնային այցելություններ, սոցիալական լարվածությունը մեղմելու համար կարիքավոր ընտանիքներին օգնություն է տրամադրվում: ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից 638 սոցիալապես անապահով քաղաքացիների դրամական օգնություն է տրամադրվել:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Աշխատել ենք ռազմական գործողություններից տուժած, ընտանեկան տարաձայնություններ ունեցող, բազմազավակ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքների, առանց ծնողական

խնամքի մնացած, բռնության ենթարկված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կրթությունից խուսափող և հակասոցիալական վարք դրսևորող, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ:

Համագործակցել ենք ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների հետ՝ կանխարգելիչ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքների հետ, կատարել այցելություններ, մասնագիտական աշխատանք՝ կրկնակի իրավախախտումների կանխարգելման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ: Տարեվերջի դրությամբ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում բռնության գործով հաշվառվել է 15 անձ և 2 անչափահաս իրավախախտ, Ջերմուկի բաժնում՝ բռնության գործով՝ 2 անձ, Վայքի բաժնում՝ բռնության գործով 8 անձ և 1 իրավախախտ անչափահաս:

Մասնակցել ենք Միասնական սոցիալական ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի 3 նիստի, Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերի՝ Ագարակաձոր բնակավայրի մանկուց հաշմանդամ երեխային խնամքի մասնագիտացված հաստատությունում տեղավորելու և Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստի՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող ծնողի ընտանիքում առկա ճգնաժամի լուծման հարցերով:

Շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձի ծրագրի շրջանակում համագործակցել ենք Մանկական զարգացման հիմնադրամի հետ, կատարել ընտանիքների կենսապայմանների ուսումնասիրություն, սոցիալ-հոգեբանական աշխատանք ծնողների և խնամակալների հետ: Հաստատությունում գտնվող 11 երեխայից ընտանիք է վերադարձել 1-ը:

<u>Իրականացրել ենք՝</u>

- Առանց ծնողական խնամքի մնացած 4 երեխայի տարածքային և կենտրոնացված հաշվառում: 1 երեխայի նկատմամբ հոգաբարձությունը մերժվել է՝ իրավական հիմքերի անհամապատասխանության պատճառով:
- Որդեգրելու ցանկություն հայտնած 8 քաղաքացու տարածքային և կենտրոնացված հաշվառում, որդեգրման ենթակա երեխաների տվյալների ուսումնասիրման աշխատանք՝ «Մանուկ» էլեկտրոնային համակարգում: Տարեվերջի դրությամբ որդեգրում չի իրականացվել՝ նախընտրելի չափորոշիչներով երեխայի բացակայության պատճառով:
- Խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած 3 քաղաքացու հաշվառում: Մեկ քաղաքացի մերժվել է՝ ոչ բավարար կենսապայմաններ ունենալու պատճառով: Հաշվառված երկու քաղաքացիները պարբերաբար ծանոթացել են խնամատարության ենթակա երեխաների ցանկին: Խնամատարության գործընթաց չի իրականացվել՝ նախընտրելի չափորոշիչներով երեխաների բացակայության պատճառով:

Շարունակական աշխատանք է կատարվել «Նորք» տեղեկատվական համակարգի «Մանուկ» ենթահամակարգում: 2024 թվին համակարգ է մուտքագրվել տվյալներ կյանքի դժվար իրավիճակում գտնվող 189 երեխայի վերաբերյալ: Իրականացվել է համակարգման և մեթոդական աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի Ջերմուկի, Վայքի և Արենիի տարածքային կենտրոնների հետ:

Կատարվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների էլեկտրոնային համակարգում գրանցված 250 երեխայի տվյալների ճշգրտման գործընթաց: Կրթությունից դուրս մնացած 2 երեխա վերադարձել է հանրակրթություն, Արցախից տեղահանված, մանկուց հաշմանդամ մեկ երեխա ներառվել է տնային ուսուցման մեջ:

Կրթական հաստատությունների և համայնքների հետ համագործակցության արդյունքում 2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին մարզի զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 140 երեխա իր հանգիստն անցկացրեց Կոտայքի մարզի Հանքավանի «Հասմիկ» առողջարարական ճամբարում:

Իրականացվել է համագործակցություն նաև հասարակական կառույցների հետ, տրամադրվել է ոլորտին վերաբերող տեղեկություններ ընտանիքի, կանանց և երեխաների, Արցախից տեղահանված քաղաքացիների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կառույցներին, շահագրգիռ այլ անձանց, համապատասխան մասնագետները մասնակցել են այդ խնդիրների քննարկումներին, դասընթացներին, ծրագրերի մեկնարկներին և ամփոփիչ հանդիպումներին:

Առողջապահության և սոցիալական
24/02/2025թ ոլորտի հարցերի վարչություն